

տարելութեան հասկացողութիւնն է բարձր բարոյականութեան, ազատութեան, իրաւունքի եւ արդարադատութեան մի նոր եւ աւելի գերադանց ըմբռնումն է:

Ինչպէս մեր օրերում, այս համաշխարհային պատերազմի հետեւանքով, քաղաքակրթուած Արեւմուտքը փոքեց Արեւելքի առջեւ արտաքին շարքի տակ թագնուած իր հոգեկան ու բարոյական լիակատար անանկութիւնը՝ ճիշդ աշխարհի քաղաքակրթ շնորհ փոքր Ասիայում իր ոյժի գերազանցութեան հետ ցուցահանեց գծուծ փոքրհոգութիւն եւ մեծ կայսրութեաննը՝ անարժան ու դաւադիր քաղաքականութիւն, արդարութեան եւ իրաւունքի անպատիւ ոտնահարումն, պարտուած ազգերի ու քաղաքների աւեր եւ բռնութիւն՝ յաճախ իր ամենամեծ ձեւերով:

Ինչպէս մեր ժամանակներում Արեւելքը ծնրադիր էր Եւրոպայի, Եւրոպայի առջեւ, հեռուից, առանց իսկ մօտիկից շփուելու, այնպէս եւ հնում Հայաստան եւ Փոքր Ասիա երկրորդադրում էին Արեւմուտքի քաղաքակրթութեան: Անշուշտ անբռնադատ մղումով իրենց հայեացքը դարձնում էին դէպի Հոմ, մինչեւ որ տեսան ու ճաշակեցին նրա զօրութեան հետ իր անասման անգթութիւնը եւ ոտնահարումն ու արհամարհանքը դէպի այսպէս կոչուած բարբարոս ազգերը: Եւ ինչպէս այսօր մի թրշուառ զուգադիպութեամբ այդ ճակատադրական հանդիպումի բոլոր դառնութիւնը, բոլոր անիրաւութիւնը, բոլոր դաւն ու նենգութիւնը Հայաստանն ապրեց խորունկ կերպով: Եւ ան ժամանակ, ինչպէս այժմ, Հայաստանը Արեւմուտքից ստացաւ ամենադաւադիր հարուածը եւ մեծ կայսրութեան վարիչների բարոյականնը՝ մօտիկից դիտեց դարչանքով: Ազգերը ցաւով ու ապշութեամբ տեսան, որ Հոմի մեծահոգի օրէնքն ու արտայայտութիւնը հոմաբանցու համար այլ է եւ իրենց համար տարբեր:

Ու թուում է, որ հայ ազգը տակաւին Մեծն Տիգրանի եւ անմիջական յաջորդների օրով նոյն հիասթափութիւններն է տեսել, ինչ որ մենք ենք տեսնում, մենք՝ ապրող սերունդներս Գաղաղից պետութիւնների տմարդութեան երեսից: Եւ սակայն այն ժամանակից քսան դար է անցել...

Մի՞թէ նոյնը կայ այս Արեւմուտքի վրայ, որ նա մնաց միշտ անիրաւ, դձուծ, նենգաւոր, անգամ դէպի այն ազգերը, որոնք նետուած են սրտաբաց կերպով դէպի Արեւմուտք ու իր քաղաքակրթութիւնը եւ որոնց միակ թերութիւնն այն է, որ վայրագ չեն եւ թուով «յոյժ ածու»:

Սօսքս Հայաստանի մասին է: Մեր հանդէպ կատարուած անհնարին դաւադիր խարդախութիւնն ու տմարդութիւնը տակաւին իր լիակատար լուսարանութիւնը չէ ունեցած: Մենք տեսանք, թէ հայկական իմաստաւն ու կուռ ճիգերով ստեղծուած մեր պետութիւնը քանդելով Հոմը ի՞նչ փայլուն կարելիութիւններ սնչացրեց Արեւելքում եւ մասնաւորապէս հայոց աշխարհում: Կանգուն ու հզօր Հայաստանի շնորհիւ յետագայի որչա՞փ աղէտներ, որչա՞փ թշուառութիւններ պիտի անհետանային եւ քանի՞ քանի՞ աւերածութիւնից ու սրածութիւնից պիտի գերծ մնար Հայաստան եւ Փոքր Ասիան: Միջին Ասիայի որչա՞փ բարբարոսներ պիտի թաղուէին իրենց աւազուտ անապատների մէջ եւ քանի՞ քանի արիւնտախանձ աշխարհակալների կատաղութիւնն ու թափը պիտի փշրուէր մեր լեռների կրանիթի վրայ եւ Բալխաններն, Հիլլադան եւ առհասարակ Արեւմուտքը պիտի չտեսնէին դարչելի տիրապետութիւնը թուրք-մոնղոլական խուժանների, որոնք այդ բարդաւած երկիրներում ամբողջ դարերով յետ մղեցին քաղաքակրթութեան որեւէ կարելիութիւն: Ի զուր չէ որ Կասպից ծովից մինչեւ Միջերկրական դեռ մինչեւ այսօր ծիլերը դժուարութեամբ են բարձրանում, ոչընչացուած անտառները տակաւին նոր նոր բարունակներ են արձակում եւ մայր հողը տակաւին անքում է եւ թաղանների սասցած հարուածներից:

Հայաստանի աւերածը, ինչպէս մի աստուածային վրէժխնդրութիւն դարձաւ ողջ Արեւելքի աւերած: Եւ 15-րդ դարում Բիւզանդիոնը ճիշդ նոյն ճակատադիրն ունեցաւ, ինչ որ Հայաստանը իր հրաշակերտ մայրաքաղաքներով:

Ասացի, որ Գաղաղիցների դաւի ու տմարդութեան բոլոր արժէքը եւ խորութիւնը՝ Հայաստանի դէմ տակաւին լիովին պարզուած չէ: Հայաստանը պատմութեան ու բախտի բե-